



ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսաապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ՆԱԽԱԲԱՆ

Մեղվաբուծությունը գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն է: Մի կողմից այն աչքի է ընկնում իր բարձր եկամտաբերությամբ, իսկ մյուս կողմից՝ մեղուն՝ որպես գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների հիմնական փոշոտող, բարձրացնում է պտղատու ծառերի, խոտաբույսերի, բանջարեղենի և բերքատվությունն ու սերմնակալումը: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մեղուն կորնգանի բերքատվությունը բարձրացնում է 100%-ով, առվույտինը՝ 40-50%-ով, իսկ խնձորենու պտղակալումը՝ 60%-ով: Այսպիսով՝ հաշվարկված է, որ մեղուներն անուղղակի ճանապարհով 15 անգամ ավելի շատ եկամուտ են տալիս տնտեսությանն ու գյուղատնտեսությանը, քան ուղղակի ճանապարհով նրանց տված մեղրը կամ մոմը:

Մեղվաբուծությունից ստացած թանկարժեք սննդամթերքը՝ մեղրը, ծառայում է նաև որպես մի շարք հիվանդությունների բուժման միջոց:

Խիստ կարևոր նշանակություն ունի նաև մեղրամոմը: Այն օգտագործվում է արդյունաբերության շուրջ 40 ճյուղերում (ռազմական, կաշվեգործության,



տպագրության, էլեկտրաարդյունաբերության, տեքստիլ արդյունաբերության և մի շարք այլ ասպարեզներում): Մեղրամոմը կիրառվում է նաև որպես բուժիչ նյութ:

Մեղվից ստացված երրորդ արտադրանքն ակնաամոմն է: Այն օգտագործվում է ինչպես արդյունաբերության, այնպես էլ բժշկության մեջ:

Մեղվի մթերքների թվում չորրորդ արտադրանքը՝ ծաղկափոշին է, որը մեղուները հավաքում են ծաղիկներից: Ծաղկափոշին կարելի է օգտագործել որպես համեղ սննդամթերք: Այն հարուստ է սպիտակուցային նյութերով և վիտամիններով, որոնք շատ օգտակար են մարդու օրգանիզմի համար:

Ծաղկափռոցին օգտագործում են նաև դեղորայք պատրաստելու համար: Այն ունի բուժիչ հատկություններ:

Մեղվից ստացված հինգերորդ արտադրանքը մեղվի թույնն է, որը օգտագործվում է բժշկության մեջ:

Մեղուների հայրենիքը և մեղվաբուծության զարգացման պատմությունը Հայաստանում

Ըստ գիտնականների, մեղրատու մեղուների հայրենիքը Հարավային Ասիան է: Դրա ապացույցն այս տարածաշրջանում մեղուների տեսակների խիստ բազմազանությունն է: Հենց այս գոտուց էլ տեղի է ունեցել մեղրատու մեղուների մյուս մայրցամաքներ ու աշխարհամասեր միգրացիան: Մայրական բները լքած պարսերը, մեծ տարածքներ անցնելով, հետզհետե գրավել են նորանոր գոտիներ, բնակավայրեր: Հարավային Հնդկաստանից մեղուները նախ ներթափանցել են Մերձավոր Արևելք, այնուհետև Եգիպտոս, որից հետո Հյուսիսային Աֆրիկայի ամբողջ ծովամերձ գոտիներով հասել են մինչև Ատլանտիկա, որտեղից էլ՝ Պիրենեյան թերակղզի:



Մեղրը որպես թանկարժեք սննդամթերք և բուժման միջոց հայ ժողովրդի լայն խավերին ծանոթ է եղել դեռ շատ վաղ ժամանակներից: Այդ մասին մեզ են հասել վկայություններ Քսենոֆոնի (431-354թթ. մ.թ.ա.) «Անաբասիս» գրքից: Մեղվաբուծության զարգացման մասին են վկայել նաև հայ պատմիչները (Մովսես Խորենացի, Հովհաննես Դրասխանակերտցի և ուրիշներ): Հայաստանում տարածված են եղել մեղվի դեղին ու գորշ գույնի պոպուլյացիաները (որոնք պահպանվել են մինչ

այսօր), առաջնությունը տրվել է դեղին մեղվին: Ձեռագրերում հիշատակվում են նաև բույսերի փոշոտման գործում մեղուների դերի մասին:

Մեղվաբնտանիքների քանակի ավելացման ու մթերատվության բարձրացման նպատակով դեռ 1931 թվականին Երևանում ստեղծվել է Անդրկովկասի



մեղվաբուծական զոնալ կայան, որը վեց տարի անց միավորվել է ՀԽՍՀ անասնաբուծության գիտահետազոտական ինստիտուտին՝ վերածվելով մեղվաբուծական բաժնի: Վերջինիս բազայի վրա 1958-ին մեր երկրում հիմնադրվել է «Մեղվաբուծական փորձակայան»: 1966թ. թվականին Մեղրիում հիմնադրվել է

մեղվաբուծական տոհմային հատուկ տնտեսություն:

Ներկայումս մեր երկրում հաշվվում է շուրջ 500 հազար մեղվաբնտանիք, տարեկան արտադրվում է շուրջ չորս տոննա մեղր, որը բավարարում է մեր երկրի պահանջարկը:

Մեղվաբուծության դերը գյուղատնտեսությունում



Միջատները կենդանիների ամենաբազմաքանակ ու տարատեսակ դասն են: Հաշվված են միջատների ավելի քան մեկ միլիոն տեսակներ: Այս մեծ բազմազանության մեջ շատ միջատներ բացասական ազդեցություն ունեն

բնության մեջ, նաև մարդու կյանքում՝ վիթխարի վնաս են հասցնում մարդկանց շրջանում:

Մեղուներն այն բացառիկ միջատներից են, որոնց խիստ օգտակար դերն ու նշանակությունը մարդու կյանքում և գյուղատնտեսության մեջ թերագնահատելն անհնար է: Մեր երկրում մշակվում են հարյուրավոր գյուղատնտեսական կուլտուրաներ, որոնք խաչաձև փոշոտման կարիք ունեն: Մեղուների կողմից բնության մեջ ծաղիկների, գյուղատնտեսական մշակաբույսերի փոշոտումն էական ու կարևոր այն դերն է, միայն որի համար անհրաժեշտ է մեծ ուշադրությամբ վերաբերվել դրանց: Հետազոտությունները ցույց են տվել, որ մեղուների կողմից իրականացված փոշոտումների շորհիվ ավելացել է հնդկացորենի, արևածաղկի ու խնձորենու պտուղների բերքատվությունը շուրջ 60%-ով, իսկ ձմերուկինը, դդումինն ու սեխինը՝ երկու և ավելի անգամ: Նրանք երեք-չորս անգամ բարձրացնում են կարևորագույն կերաբույսերի՝ առվույտի, կարմիր երեքնուկի, թավոտ վիկի և այլ սերմերի բերքատվությունը: Խելացիորեն օգտագործելով մեղուների՝ որպես լավ փոշոտիչների դերը, կարելի է դեղձի, մանդարինի և կիտրոնի բերքատվությունը բարձրացնել չորս, բային ու կեռասինը՝ յոթ անգամ, իսկ խաղողի որոշ տեսակներինը՝ տասն անգամ:



Մեղրատու բույսեր


Մեղրատու են այն ծածկասերմ կամ ծաղկավոր բույսերը, որոնցից մեղուները նեկտար ու ծաղկափոշի են հավաքում: Բնական, մեղրատու բուսականությամբ Հայաստանը շատ հարուստ է ու բազմազան: Այն տարածվում է դաշտային ցածրադիր տարածքներից մինչև ամենաբարձր լեռները (Արագած լեռ) կամ ծովի մակերևույթից 500-3228մ բարձրության վրա: Տարբեր բարձրության վրա տարբեր մեղրատու բուսականություն է լինում, որը բնորոշ է տվյալ վայրին:

ՀՀ-ում տարածված են ավելի քան 1000 մեղրատու բույսեր, որոնցից մեղվաբուծության համար առավել արժեքավոր են 200-ը: Լեռնային շրջանները համարվում են ամենալավ մեղրատու գոտիները, որտեղ տաք և խոնավ տարիներին մեղվի ընտանիքներից առատ մեղր է ստացվում:

Նեկտարը քաղցրահամ հեղուկ է, որն արտադրվում է հիմնականում ծաղկի խորքում՝ վարսանդի և առէջների հիմքի մոտ: Նեկտարը պարունակում է եղեգնաշաքար, խաղողաշաքար, պտղաշաքար, քիչ քանակությամբ՝ սպիրտներ, հոտավետ, ազոտային, հանքային նյութեր, թթուներ, ֆերմենտներ այլն: Որոշ մեղրատու բույսեր, օրինակ՝ բարդին, բալենին, բացի նեկտարից, արտադրում են նաև խեժանյութեր, որոնցից մեղուներն ակնամոմ են պատրաստում: Նեկտարարտադրությունը և մեղուների կողմից նեկտար հավաքելը համընկնում են բույսերի ծաղկման շրջանին:

Ծառատեսակներից լավագույն մեղրատուներ են ծիրանենին, խնձորենին, տանձենին, բալենին, կեռասենին, լորենին, դաշտային թխկին, սպիտակ ու դեղին ակացիաները, հատապտուղներից՝ հաղարջենին, կոկոռչենին, ագնվամորին, խոտաբույսերից՝ հնդկացորենը, արևածաղիկը, համեմը, մանանեխը, կորնգանը, երեքնուկը, առվույտը և այլն: Որոշ խոլորձների 1 ծաղիկն արտադրում է մոտ 30գ նեկտար, իսկ սովորական լորենունը՝ 0,5-7,5մգ:

Անտառային մեղրատուներից են նեղտերևին, խլածաղիկը, գետնաբաղեղը, թոքախոտը, խմին և այլն: Մեղրատու են նաև բանջարաբուստանային, մերձարևադարձային գրեթե բոլոր բույսերը: Մեղրատու բույսերը տարածված են



հիմնականում մարգագետիններում և խոտհարքներում: Որոշ մեղրատու բույսեր նաև մշակովի են:

Ստորև ներկայացված են մեղրատու ծառերը և բույսերը՝ համառոտ բացատրականներով, որոնք աչքի են ընկնում իրենց նեկտարատվությամբ և փոշեռատությամբ:

Նշենի. ծաղկում է վաղ գարնանը, տալիս է առատ նեկտար ու ծաղկափոշի:


Շիրանենի. ծաղկում է վաղ գարնանը, տալիս է առա նեկտար ու փոշի: Մեղվի ուժեղ ընտանիքները ծիրանենուց բերում են օրական 0.8-1կգ բերք:



Հեղձենի. ծաղկում է գարնանը, տալիս է առատ ծաղկափոշի ու քիչ նեկտար:

Սպորբենի. ծաղկում է գարնանը, տալիս է նեկտար ու ծաղկափոշի:

Կեռասենի. ծաղկում է գարնանը, տալիս է ծաղկափոշի և որոշ չափով նեկտար:



Բալենի. ծաղկում է վաղ գարնանը, տալիս է առատ նեկտար ու ծաղկափոշի:

Խնձորենի. ծաղկում է գարնանը, տալիս է նեկտար ու ծաղկափոշի:

Տանձենի. ծաղկում է գարնանը, տալիս է ծաղկափոշի և որոշ չափով նեկտար:

Սերկևիլենի. պտղատու ծաղիկներից գարնանը ամենաշատն է ծաղկում և տալիս է ծաղկափոշի ու որոշ քանակությամբ նեկտար:

Վերը նշված ծառերի ծաղկումից որոշ ժամանակ հետո ծաղկում են հետևյալ ծառերը:

Մսիտակ ակացիա. այս ծառերի բոլոր տեսակները շատ առատ նեկտար են տալիս: Այնտեղ, որտեղ ակացիաների ծառեր շատ կան, դրանց ծաղկման հետ միասին ծաղկում են որոշ նեկտարատու խոտաբույսեր:



Փշատենի. ծաղկում է գարնան վերջին և տալիս է շատ առատ նեկտար ու ծաղկափոշի: Հաջող տարիներին հնարավոր է փշատի ծառից ստանալ առատ բերք ու մեղուներին փոխափոխել լեռնային շրջաններ:

Լորենի. այս ծառը համարվում է ամենանեկտարատուն, որը տալիս է առատ ու բարձրորակ մեղր: Հայաստանում լորենու ուժեղ բերք լինում է մի քանի տարին մեկ անգամ: Պատճառն այն է, որ չափազանց զգայուն է անբարենպաստ եղանակների, հատկապես ցրտի նկատմամբ, այդ պատճառով էլ լորենուց ստացված բերքն անկայուն է:

Թթենի. մեղուներն օգտվում են թթենու ոչ թե ծաղիկներից, այլ պտուղներից:

Նեկտարատու թփերից մորենին, մոշին, հաղարջենին նույնպես տալիս են նեկտար ու ծաղկափոշի:



Ցանովի խոտաբույսերից Հայաստանում օգտագործվում են հետևյալ մեղրատու կուլտուրաները:

Կորնզան. այս խոտաբույսն առատ նեկտար է արտադրում:

Վերջին տարիներին կորնգանի մշակելիությունը լայն ծավալ է ստացել Հայաստանում: Նրա հիմնական փոշոտողը մեղուն է: Կորնգանի ցողունը լինում է կանգուն, կիսականգուն և փոված: Բարձրությունը, ըստ տեսակների, լինում են 90-132սմ,



տերևները բարդ ձև ունեն, ծաղիկները օղակաձև են, ու դրանց թիվը կախված է տեսակից: Ծաղկումը և սերմերի հասունացումն սկսվում են ներքևից, յուրաքանչյուր օր ծաղկում է 3-5 ծաղիկ: Կորնգանի մեկ ողկույզի ծաղկումը տևում է 10-15 օր: Ծաղիկները լինում են վարդագույն, մանուշակագույն, երբեմն՝ սպիտակ: Կորնգանից ստացված մեղրն իր որակով չի տարբերվում բնական բույսերից ստացված մեղրից, և նեկտարից հնարավոր է ստանալ 300-400կգ մեղր:



Առվույտ. սա միայն դաշտային պայմաններում է նեկտար արտադրում:

Արևածաղիկ. համարվում է նեկտարատու բույս, բայց նրանից ստացված մեղրն այնքան էլ որակով չէ, որովհետև յուրահատուկ անդուր համ ունի:

Վայրի նեկտարատու բույսեր

Օղակաձև եղեսպակ. այս բույսը հանդիպում է չոր, արևոտ տեղերում: Հողի նկատմամբ պահանջկոտ չէ, ծաղկի գույնը կարմրանման ու շագանակագույն է: Ծաղկի կյանքի տևողությունը 2 օր է: Ինտենսիվ նեկտար է տալիս: Մեկ ծաղկից ստացված նեկտարի քանակը տատանվում է 0.1-2.5մգ-ի: Նեկտարը հոտ չունի, լինում է գորշագույն, փայլուն:



Եղեսպակը ծաղկում է հունիսից մինչև օգոստոսի վերջ: Բարենպաստ եղանկների դեպքում տալիս է մեկ հեկտարից մինչև 200կգ մեղր:



Երեքնուկներ. մի քանի տեսակներ (սպիտակ և դաշտային) ծաղկում են ամռանը, շատ քիչ խոնավ տարիներին առատ բերք են տալիս: Երեքնուկը գլխավոր մեղրաբերքի ժամանակ համարվում է հիմնական նեկտարատու բույսերից մեկը:

Սովորական ուրց. սպիտակ կամ բաց կապտավուն գույն ունեցող բույս է: Ծաղկում է ամռանը: Առատ մեղրատու է:

Մանանեխ դաշտային. բաց դեղնավուն ծաղիկներով բույս է, ծաղկում է ամռանը, հաճախ ամբողջ դաշտը ծածկվում է դեղին գույնով: Առատ մեղրատու է, ունի առատ նեկտար ու քիչ ծաղկափոշի:



Անանուխ (դաճղ). մի քանի տեսակներ ունեն բաց և մուգ կապույտ ծաղիկներ: Ծաղկում են ամռանը քարքարոտ տեղերում, երբեմն գրավում են խոշոր տարածություններ, իսկ դրա մի



տեսակը հաճախ խիտ աճում է ցածր գոտիներում: Մեղրատու է և տալիս է նեկտար:

Բնության էկոհամակարգում մեղուների անգնահատելի դերի վառ ապացույցը ժողովրդական խոսքերն են. առանց մեղվանոցի այգի չկա, առանց մեղվի պտուղ չկա:



Մեղրի օրգանական արտադրություն

Ընդհանուր տեղեկություններ օրգանական արտադրության վերաբերյալ

 Օրգանական արտադրանքի նկատմամբ սահմանված պահանջները տարբերվում են այլ գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ սահմանված պահանջներից, այնքանով, որ օրգանական արտադրության դեպքում արտադրանքի իդենտիֆիկացումը և մակնշումը կազմում են գործընթացի բաղկացուցիչ մաս և կարևոր պահանջ:

 «Օրգանական» մակնշման տերմին է, որը տարբերակում է այն արտադրանքը, որը ստեղծվել է՝ համաձայն օրգանական արտադրության ստանդարտների, և սերտիֆիկացվել է պատշաճ հիմնադրված սերտիֆիկացնող մարմնի/ների կողմից:

 Եթե մակնշման մեջ արտադրանքը կամ դրա բաղադրամասերը նկարագրվել են «օրգանական», «կենսադինամիկ», «կենսաբանական», «էկոլոգիական» կամ միևնույն իմաստը պարունակող այլ տերմիններով՝ ներառյալ նշվածների կրճատ ձևերը, սրանք գնորդին վկայում են այն մասին, որ արտադրանքը կամ դրա բաղադրամասերը արտադրվել են՝ համաձայն օրգանական արտադրության ընթացակարգերի:

 «Օրգանական արտադրությունը» տնտեսության կառավարման ամբողջական համակարգ է, որը միավորում է բնապահպանական լավագույն փորձը,

կենսաբազմազանության պահպանման լավագույն մակարդակը, բնական ռեսուրսների պահպանումը, կենդանիների բարեկեցության ստանդարտների կիրառումը, ինչպես նաև այնպիսի արտադրական գործընթացներ, որոնք հիմնված են սպառողների՝ մթերքի արտադրության համար բնական նյութեր և գործընթացներ կիրառելու վերաբերյալ նախադրությունների վրա:

Օրգանական արտադրության ընթացակարգը, այսպիսով, ունի երկակի սոցիալական դեր. մի կողմից՝ այն ապահովում է որոշակի շուկա, որը համապատասխանում է օրգանական արտադրանք սպառողի պահանջներին, և մյուս կողմից՝ ապահովում է հասարակայնությանն այնպիսի արտադրանքներով, որոնք օժանդակում են շրջակա միջավայրի և կենդանիների բարեկեցության պահպանմանը, ինչպես նաև գյուղի զարգացմանը:

Ընդհանուր սկզբունքներ

 Մեղվապահությունը կարևոր գործունեություն է, որը նպաստում է շրջակա միջավայրի, գյուղատնտեսության և անտառային տնտեսության արտադրանքի բարելավմանը՝ մեղուների միջոցով փոշոտման իրականացմամբ:

 Օրգանական արտադրության ժամանակ փեթակների հետ վարվելը և կառավարումը պետք է համապատասխանեն օրգանական արտադրության սկզբունքներին:

 Հավաքի տարածքները պետք է բավականաչափ մեծ լինեն, որպեսզի ապահովեն համապատասխան և բավականաչափ կեր ու ջուր:

 Բնական նեկտար, մեղրացողի և ծաղկափոշու աղբյուրները պետք է հիմնականում ունենան օրգանական ծագում և/կամ լինեն վայրի բույսերից:

 Մեղուների առողջությունը պետք է հիմնված լինի պրոֆիլակտիկայի վրա, ինչպիսին է, օրինակ՝ ցեղերի ընտրությունը, բարենպաստ միջավայրի, հավասարակշռված կերի ապահովումը և համապատասխան բուժման կիրառումը:

 Փեթակները պետք է կազմված լինեն հիմնականում բնական նյութերից, որոնք շրջակա միջավայրի կամ մեղվաբուծական արտադրանքի աղտոտման ռիսկ չեն պարունակում:

 Երբ մեղուները տեղադրվում են վայրի տարածքներում, պետք է հաշվի առնել տեղի միջատների պոպուլյացիան:

Փեթակների տեղադրում



 Փեթակները պետք է տեղադրվեն այնպիսի վայրերում, որոնք երաշխավորում են նեկտարի և ծաղկափռու այնպիսի աղբյուրներ, որ բաղկացած են օրգանական մեթոդով արտադրվող մշակաբույսերից կամ պատահական աճած և վայրած ոչ օրգանական անտառային կամ պատահական աճած մշակաբույսերից, որոնք մշակվում են միայն ցածր էկոլոգիական ազդեցություն ունեցող մեթոդներով:

 Փեթակները պետք է տեղադրվեն բավականաչափ հեռու այնպիսի աղբյուրներից, որոնցից կարող է տեղի ունենալ մեղվապահական արտադրանքի աղտոտում կամ կարող է վատթարանալ մեղուների առողջական վիճակը:

 Մեղվապահական փեթակները պետք է տեղադրված լինեն այն տարածքներում, որտեղ մշակվող և/կամ ինքնաբերաբար աճող բուսականությունը

համապատասխանում է օրգանական արտադրության պահանջներում սահմանված կանոններին:



Մեղվապահական փեթակները պետք է տեղադրված լինեն այն տարածքներում, որտեղ մշակվող և/կամ ինքնաբերաբար աճող բուսականությունը համապատասխանում է օրգանական արտադրության պահանջներով սահմանված կանոններին:



Օրգանական արտադրության սերտիֆիկացնող մարմինը (այսուհետ՝ սերտիֆիկացնող մարմին) պետք է հաստատի այն տարածքները, որոնք ապահովում են մեղրացողի, նեկտարի և ծաղկափոշու համապատասխան աղբյուրներ՝ հիմք ընդունելով մատակարարողների կողմից ներկայացված և/կամ ստուգայցի ընթացքում բացահայտված տեղեկատվությունը:



Սերտիֆիկացնող մարմինը հաստատում է փեթակներից 3 կմ շառավղով տարածք, որի շրջանակներում մեղուներին պետք է մատչելի լինի համապատասխան և բավարար կեր:



Սերտիֆիկացնող մարմինը պետք է սահմանի գոտիներ, որտեղ չպետք է տեղադրվեն այն փեթակները, որոնք բավարարում են օրգանական արտադրության պահանջները՝ ելնելով արգելված նյութերով, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմներով կամ շրջակա միջավայրն աղտոտող նյութերով աղտոտված լինելու հանգամանքից:

Կառավարում



Հիմքի մեղրահացը պետք է պատրաստված լինի օրգանական արտադրության մեղրամոմից:



Մեղվապահական արտադրանք ստանալու համար մեղվահացում մեղուների ոչնչացումն արգելված է:



Այնպիսի վնասվածքները, ինչպիսիք են մայր մեղվի թևերի կտրումը, արգելված են:



Մեղրի արտադրության գործընթացներում քիմիապես սինթեզված ռեպելենտների օգտագործումն արգելված է:



Ծխով մշակումը պետք է պահվի նվազագույն մակարդակում: Ծխեցման համար ընդունելի նյութերը պետք է լինեն բնական կամ պատրաստված լինեն սույն օրգանական արտադրության պահանջներին համապատասխանող նյութերից:



Խորհուրդ է տրվում մեղրի ստացման և մեղվապահական արտադրանքի վերամշակման ժամանակ պահպանել հնարավորինս ցածր ջերմաստիճան:

Մեղրի ստացման ժամանակ արգելվում է որդերով մեղրահացի օգտագործումը:



Նույն տնտեսության մեջ մեղվապահը փոշոտման աշխատանքները կատարելու նպատակով կարող է վարել միաժամանակ օրգանական և ոչ օրգանական միավորներ, այն պայմանով, եթե օրգանական արտադրության բոլոր պահանջները կատարվում են՝ բացառելով մեղվաընտանիքների նույն տեղում գտնվելը: Հակառակ դեպքում արտադրանքը չի կարող վաճառվել որպես «օրգանական»:



Պետք է վարվել սույն դրույթների պահպանումը վկայող փաստաթղթային գրանցումներ:

Փաստաթղթավորում



Պետք է վարել մանրամասն ու շարունակ թարմացվող գրանցումներ:



Պետք է կատարվի բոլոր փեթակների տեղաբաշխվածության քարտեզագրություն:

Պահեստավորում և փոխադրում



Արտադրանքի ամբողջականությունը պետք է պահպանվի մշակման, պահեստավորման և փոխադրման ընթացքում՝ հիմնվելով հետևյալ նախագուշացումների վրա՝



Օրգանական արտադրանքը պետք է միշտ պաշտպանվի ոչ օրգանական արտադրանքի հետ միախառնվելուց:



Օրգանական արտադրանքը պետք է միշտ պաշտպանվի օրգանական գյուղատնտեսությունում և վերամշակման ժամանակ արգելված նյութերի հետ շփումից:



Օրգանական արտադրանքի պահեստավորման տարածքները և փոխադրման կոնտեյներները պետք է մաքրվեն՝ օրգագործելով օրգանական արտադրությունում թույլատրված մեթոդներ և նյութեր:



Պահեստային տարածքներում և փոխադրման կոնտեյներներում, որոնք նախատեսված չեն միայն օրգանական արտադրանքի համար, օգտագործելուց առաջ պետք է ձեռնարկվեն միջոցառումներ, որպեսզի կանխվի ցանկացած անցանկալի նյութերով աղտոտումը:



Պահեստավորման համար տարածքը պետք է այնպես կազմակերպված լինի, որ երաշխավորի խմբաքանակների նույնականացումը, և կանխարգելվի միախառնվելու կամ օրգանական կանոններին չհամապատասխանող նյութերով և/կամ արտադրանքով աղտոտվելու ցանկացած հնարավորություն:



Օրգանական մթերքը պետք է միանշանակ և պարզ նույնականացվեն ողջ ժամանակաընթացում: Անասնաբուժական ակրպաթիկ արտադրանքի և հակաբիոտիկների պահումը տնտեսություններում թույլատրելի է, եթե դրանք նշանակվել են անասնաբույժի կողմից օրգանական արտադրության ընթացակարգերի շրջանակներում նկարագրված բուժումների համար, այն պայմանով, որ դրանք պահվեն հսկվող տարածքում, և կատարվեն համապատասխան գրանցումներն ու փաստաթղթավորումը:

Մեղվապահության հանդեպ հատուկ հսկողական միջոցառումներ



●Անասնաբուժական դեղամիջոցների օգտագործման դեպքում դրա տեսակը, ախտորոշման մանրամասները, պոզոլոգիան, կիրառման մեթոդը, բուժման տևողությունը և համակարգից հանման/մեկուսացման իրավական տևողությունը պետք է արձանագրվի և տեղեկացվի սերտիֆիկացնող մարմնին:

●Մեղվապահական միավորի տեղադրման տարածքը պետք է գրանցվի փեթակների նույնականացման հետ մեկտեղ: Սերտիֆիկացնող մարմինը պետք է տեղեկացվի դրա փոխադրման մասին առնվազն 48 ժամ առաջ:

●Մեղվաընտանիքները պետք է նույնականացվեն փեթակներով:

●Մատակարարողը սերտիֆիկացնող մարմնին ստուգայցի ժամանակ պետք է տրամադրի արտադրական միավորի ազատ մուտքի իրավունք, ինչպես նաև գրավոր հաշվառումների և համապատասխան ուղեկցող փաստաթղթերի մատչելիություն:

●Մատակարարողը պետք է սերտիֆիկացնող մարմնին տրամադրի ստուգայցի նպատակների համար անհրաժեշտ ցանկացած այլ տեղեկատվություն: